Օթախի խարջ, հարկը՝ 26 չերվոնեց.

Զափար խանայի կամ փոստային տուրքը՝ 130 ռուբլի խանական փողով.

Բայրամլըղ կամ բայրամի օրվա առիթով տոնական նվիրաբերություն՝ դրամով 32 ռուբլի.

Միրզայանի կամ խանի առաջին միրզայի-քարտուղարի օգտին տուրք՝ 32 ռ. և 3 կօտ՝ չետվերտ ցորեն։

Բաշփուլի կամ գլխահարկ՝ 200 ռ.

Շէրբէթփուլի կամ խանի համար շէրբէթ պատրաստողների օգտին՝ 24 ռ.

Շօռափուլի կամ բորակ[15] շինելու թույլտվության համար՝ 60 ռ.

Գորգերի և ջվալնէրի փոխարեն՝ 30 ռ.

Հասարակ մահուդի կտորից շինած չուխայի փոխարեն՝ 10 ռ.

Աղ՝ 18 բաթման[16] հարուստ հարսանիքից՝ 10 ռ.

Չքավոր հարսանիքից՝ 5 ռ.

Փայտ՝ 80 բեռ.

Սրա վրա ավելացրած ղուլուղի և բաղվիլանի, այսինքն՝ խանի նօքարնէրի-ծառաների օգտին վերցվող տուրք, հարկի ամեն չերվոնեցի դիմաց ղուլուղին՝ 50 կոպ. և բաղվիլանին՝ 50 կոպ.

Նույնչափ և օթախխարջու ամեն մեկ չերվոնեցից.

Նույն օրինակով միայն ղուլուղի հաշվի և Միրզայանի ամեն թումանից և ցորենի ամեն մի կօտից՝ 50 կոպ.

Փայտի ամեն բեռից՝ 20 կոպ.

Շէրբէթփուլիի ամեն թումանից և ամեն կօտից՝ 50 կոպ.

Բաշփուլիի ամեն թումանից՝ 50 կոպ.

Շօռափուլիի ամեն թումանից՝ 50 կոպ.

Ղուզփուլիի՝ աղի փողի 10 բաթմանից՝ 1 ռ. 26 կոպ.

Նաև մալուջէվաթից՝ բերքի մեկ հինգերորդ մասից՝ 80 կօտ՝ չետվերտ.

Քալանթարլըղ՝ 120 ռ. և 2 կօտ ցորեն։

Ընդհանուր գումարը բռնում էր 2711 ռ. խանական, կամ 430 ռ. ռուսական արծաթ դրամ։

Այսպիսի և նման խճճված տուրքերի հավաքման գործը ավելի ևս դժվարանում էր այն պատճառով, որ խանն իր այս եկամուտներից այս կամ այն տեսակը ամբողջապես կամ մի մասով նվիրում էր ժամանակավորապես կամ ցմահ, երբեմն էլ ժառանգաբար, իր շնորհքին արժանացած մեկին. այսպես՝ Տաթևի մահալի քալանթարլըղը տրված էր ժառանգաբար կապիտան Հաջի-Աղալար-բեկին։

Ոչ պակաս բարդ էին հօգուտ կալվածատիրոջ հավաքվող տուրքերը։ Այդ տուրքերի մի երկար ցանկին արդեն ծանոթացանք Տեղ գյուղի բնակիչների գանգատից, որ ներկայացրել էին քննիչին 1846 թվին իրենց բողոքը հիմնավորելու համար։ Ահա մի այլ ցանկ այն եկամուտների, որոնք քöխվան հավաքում էր կալվածատիրոջ համար։ Ըստ նույն Մոգիլևսկու և Երմոլով 2-րդի կազմած նկարագրության, Կոնրձոր գյուղի կողմից պիտի վճարվեր[17].

Կասում-բեկի ժառանգներին «դրամով 1760 ռուբլի».

Բայրամլըղ կամ բայրամ տոնի առիթով նվիրաբերություն՝ 75 ռ.

Ջվալնէրի փող՝ 150 ռ.

---

[15] Селитра.

[16] Կշռի չափ (թրք.) = $2\frac{1}{2}$ = 10 կգ։

[17] Անդ, Имение капитана Рустам-Бека.